



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Երբ հասցեն. Тифлисть, Редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ամս օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցիւզով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

Հիմնադրող Գրիգոր Արծրունի

ԲՈՒՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յուդայական Բերկիւնում. — Երբեք ՏԵՍՈՒ-
թիւն. Բագրի Մարգարեական ընկերութեան
գրադարան-ընթերցարանը. նամակ Բեքայից.
Նամակ խմբագրութեան. ներքին լուրեր. — ԱՄ-
ՏԵՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր. — ՀԵՍՏԱՆԻՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — Գեղար-
ւեստը հայերի մէջ:

ՅՈՒՅԱՆՆԵՐ ԲԵՐԿԻՆՈՒՄ

Մենք հաղորդեցինք տեղեկութիւններ
հայկական ցուցահանգէսի մասին,
որ պէտք է բացվի ներկայ ամառը Բերկի-
նում և հրատարակեցինք ցուցահանգէսի
ծրագիրը: Պէտք է ցուել, որ ցուցահան-
գէսի մասին հրաւերը շատ ուշ յայտնի
եղաւ և շատ քիչ ժամանակէ մնում մինչև
նրա բացումը: Յուդայական գաղափարը
շատ քիչ է յայտնի այն անձանց, որոնց
մասնակցութիւնը կարող է օգտակար լի-
նել նրա իրականացման և նպատակա-
յարմար կազմակերպութեան համար:

Յուդայական կազմը պատասխանա-
տու գործ է և ծախքեր է պահանջում:
Մեզ հաղորդած տեղեկութիւններից երե-
ւում է, որ հարկաւոր է մօտ երեսուցի
հազար ռուբլի մի գումար նրան գումար
բերելու համար: Ո՞վ պէտք է տալ այդ
գումարը: Ահա մի հարց, որի վերջը նոյն-
պէս դրված է հրապարակի վրա:

Եթէ ցուցահանգէսի մասնակցներ
շատ լինեն, եթէ շատ մարդիկ շահա-
գումար լինեն, որ նրանց արդիւնքները
հանդէս դրված լինեն ցուցահանգէսում,
այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրը կը
վերցնէ իր վրա հարկաւոր ծախքերի մի
մասը: Միւս կողմից ցուցահանգէսի աջո-
ղութեան նպատակով են երկաթուղիները,
վերցնելով էժան ճանապարհածախս, կա-
ռուկաները, աղաքներով ցուցահանգէսի
համար նշանակված ապրանքները մարտե-
րից և տուրքերից, մասնաւոր ընկերու-
թիւնները և գիտնական հաստատութիւն-
ները, որոնք կամենում են աջակցել բարի
գործի աջողութեան: Իսկ ցուցահանգէսի
համար իրեն ժողովելու և ժամանակին
տեղ հասցնելու գործը դիւրացնելու հա-
մար շատ մեծ դիւրութիւններ են առաջ
դառնալ, երբ զանազան տեղերում կազմվում
են յատուկ ցուցահանգէսական կոմիտէներ
և կազմակերպում են արդիւնքներ ստանա-
լը և ուղարկելը մինչև ցուցահանգէսի
տեղը:

Յաւելով պէտք է յայտնել, որ Բերկինի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՂԱՐՈՒՆՍՏԸ ՀԱՅՏԵՐԻ ՄԷՉ

II

(Շարունակութիւն)

Գեղարուեստներու ծագման և ծաղկումի
պատմութիւնը գիտնականներէն ուսումնասիրող
և գրող ուսումնականներ կենթադրեն, որ ծա-
րարագետութիւնը ամեն միւսներից առաջինը
և հինն է, և նախամարդիկ լոյս ապառնեց
ծառերու բուններու խոտոցներէն, ապա գետնա-
փորներէն ու քարանձաւներէն բաժանվելուն
պէս հարաւոր շինել ստիպված են եղել,
իբր ավար արարածներ, պաշտպանվելու հա-
մար բնութեան ոյժերու և իրենցից դուրսը
կենդանական միւս ցեղերու կեղծութիւնը:
Այդ նախատուին մէջ մարդ ինքզինքը մի ան-
գամ ապահով գտաւ և տեսնելէն յետոյ է, որ
գինք չընթացող բնութեան ծարարագետութե-
ան հանդէպ ազդեցելով սկսել է տակաւ առ տակաւ
պճնութեան և զարգարանքի հարցերով զբաղի:

կենտրոնական մասնաժողովը այդ կողմից
էն հեշտացրել գործը: Յուդայական հանգէսի
պէտք էր տալ աւելի գործնական կազմակեր-
պութիւն: Երկուսից մէկը կամ պէտք էր նը-
րան սահմանափակել միայն ազգագրական
նիւթերով և այդ կողմից նրան տալ ոչ այն
ընդարձակ ծաւալը, որ այժմ ծրագրված է,
և կամ եթէ անհրաժեշտ է համարվել ար-
դիւնագործական նիւթեր գրաւելը, այն ժա-
մանակ պէտք էր ցուցահանգէս հրաւիրել
որոշ աշխարհագրական տեղի արդիւնագոր-
ծներին, չը բաւականանալով հայտնաւե-
նով եթէ արդարեւ ցուցահանգէս կազմ-
ված լինէր առաջաւոր Ասիայի արդիւն-
ների համար և կենտրոնական կոմիտէն
գիտնական արած լինէր Ռուսաստանի,
Պարսկաստանի և Թիւրքիայի կառավարու-
թիւններին մասնակցելու այդ ցուցահան-
գէսին, այն ժամանակ այդ պետութիւն-
ների տեղական իշխանութիւնները կազմ-
էին ցուցահանգէսի գործին, կը զբոսնէին
կազմելու տեղական կոմիտէներ և գիւրու-
թիւններ կը տալին ապրանքներ տեղափո-
խելու համար Անգլիոյ վարչական ղեկի Բեր-
կին: Եթէ Ռուսաստանը և Եթէ Պարսկաս-
տանը ու Թիւրքիան բարեհաճ աջակց կը
նայէին մի ցուցահանգէսի, որ նպատակ
ունի նրանց արդիւնքները հռչակել Եւրո-
պայի այնպիսի մի նշանաւոր կենտրոնում,
ինչպէս է Բերկին: Իսկ այժմ հարցը
պարզ է: Յայտնի է Եթէ որ շրջանների
համար է ցուցահանգէսը: Ինչու, օրինակ,
նաւթը չը պէտք է համարվի և հայկա-
կան և ուսումնական ու Թիւրքական, պիւն-
դի հայկական և Թիւրքական և քրդական
մի հանք: Ինչու գործադրողութիւնը չը
պէտք է սեփականացվի և հային, և Թիւր-
քին, և քրդին, և ասորին ու կամ պարս-
կին:

Մեր դրած հարցը գործնականութեան
մէջ մեծ նշանակութիւն ունի և նա ան-
խուսափելի կերպով պէտք է աղբէ ցու-
ցահանգէսի աջողութեան վրա: Եթէ ուշ
է դեռ, թող կենտրոնական կոմիտէն
կազմակերպէ արդիւնագործական մասը
ուրիշ կերպ, կապելով արդիւնագործու-
թիւնը երկրի, և ոչ թէ այս և այն ազգա-
կական տարրի հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱ-
ԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

Մարգարեական ընկերութեան աջին ընկող
գործերից առաջին տեղը բռնում է նրա գրա-
դարան-ընթերցարանը: Երկարամեայ այդ հիմ-

նարկութիւնը ոչ միայն հանրամատչելի է դար-
ձել, այլ և, համեմատաբար, բազմակողմանի և
հարուստ: Տարեցտարի կուտակվող վիճակա-
գրական կանոնաւոր տեղեկութիւնները այդ են
ապացուցանում: Բացի նրանից, որ ձեռք է
բերվում լոյս տեսնող ամեն մի նոր գիրք, ամեն
մի ամսագիր հայերէն, թէ՛ ռուսերէն, նաև հոգ
է տանվում ձեռք բերելու կովկասագիտական
և առհասարակ գրական արժանիք ունեցող
գրութեանքը:

Մուտ գործելու համար պահանջվում է յա-
ճախորդից մի կօպէկ միայն: Միայն մի կօպէկ
վճարելով՝ ամենքը, թէ՛ հայ, թէ՛ ռուս, թէ՛
հրէայ, թէ՛ թուրք, թէ՛ վրացի օգտվում են
այս ծախքով: Յաճախորդների մէջ աչքի են ընկ-
նում նաև գերմանացիներ, լեհացիներ, չեխներ,
ֆրանսիացիներ, օսեր և սերբեր:

Դրադարան-ընթերցարանը մեծ ծառայութիւն
է մատուցանում շատ շատերին նաև իբրև ժա-
մանակաւոր ապաստարան, այդտեղ են իրանց
պարագ օրերը անցկացնում նորեկ գործ որո-
նողները, որոնք տարվալ համարեա բոլոր եղա-
նակներին պատկանելի թիւ են կազմում մեր
նաւթագործութեան...

Մարգարեական ընկերութեան այդ գրա-
դարանը առ 1 յունվարի 1903 թ. ունի 9155
գիրք, բաղկացած 14,351 հատորից, արժողու-
թեամբ 23689 ռ. 67 կ. այդ գրքերից ռուսե-
րէն 7755 հատոր, հայերէն՝ 2539, այլազգի-
53: Ամսագրերից ռուսերէն՝ 3421 հատ, հայե-
րէն 411, այլազգի 145: Դրադարանը ունեցել
է 1902 թ. ընթացքում 878 բաժանորդ, որոն-
ցից 655 տղամարդիկ, 223 կանայք: Ըստ ազ-
գութեան կազմել են՝ 337 հայ, 337 ռուս և
204 այլազգի, որոնցից 110 հրէայ, 46 գերմա-
նացի, 15 թուրք, 14 լեհացի, 12 վրացի, 3 չեխ,
2 ֆրանսիացի, 1 օս և 1 սերբ:

Ընթերցանութեան համար վերցրած գրքերից
81%-ը գեղեցիկ դպրութեան վերաբերեալ
գրքեր են: Հայ հեղինակների գրութեանցից ամե-
նից շատ կարգաւորվել են Բաթիկի հեղինակու-
թիւնները, ապա Պոստոլոյի, յետոյ Մերկսի,
Արուստի, Շիրվանշադի, Լէօնի և այլն:

Ընթերցարանը յաճախորդների թիւը եղել է
մօտ 40,000 հոգի, որոնցից մուտքի մատու-
նում արձանագրվել են 32686 հոգի միայն...
դրանցից 22593 հայ են, 10,093՝ այլազգի: Ըստ
պարագմունքի յաճախորդները կազմում են՝
215 մարդ մասնաւոր ծառայութիւն ունեցող-
ներ, 42 հոգի պետական ծառայողներ, 35 հոգի
վաճառականներ, 35 հոգի արհեստագործներ,
199 հոգի ուսանողներ, 15 հոգի ուսուցիչներ,
6 հոգի բժիշկներ, 6 հոգի ինժեներներ և այլն:

Ընթերցարանում ստացվել են պարբերական
հրատարակութիւններ 67 հատ, որոնցից 44
հատ ռուսերէն, 16 հատ հայերէն, 7 հատ էլ
այլազգի:

1,200 տարվան հսկայի մէջ միջին դարու
ոտման ոճով մի շինութիւն է: Եւ որովհետեւ
այդ տաճարը ցարդ միակն է իր տեսակին մէջ
և դրա կառուցված ժամանակի մեր տիրացու-
ած հայութիւնը իր բոլոր բովանդակ կենս-
քով մոլեգնապէս ենթարկված է եղել արեւ-
մուտքի յունա-բիւզանդական կրօնաթափա-
քաղաքակրթութեան՝ կարելի է ենթադրել, որ
մեր, հայկական եկեղեցական ծարարագետ-
ութիւնը ըստ իր հաղիւ ազգային ոճին վերջ-
նապէս նուիրագործված ոճ մը լինելէն առաջ՝
եկուր ոճի մի գործ է:

1900-ի և 1901-ի ամառները մասնաւորու-
պէս ծանոթացել Ռուսական Հայաստանի մի
կարեւոր մարդ Յատուկ նպատակա էր փնտռել
և գիտնալ թէ ժամանակին հայ քաղաքները և
հայ արհեստագործութիւնը բնակարանները
մի բան են եղել *):

*) Հայ գիւղացու տունը ամեն տեղ անհոփոխ
այնպէս է մնացել ինչպէս որ Քսենոփոն իր համա-
կարծիքով հասնում է մէջ նկարագրած է
2000 տարիներ առաջ... Հետաքրքրողներուն կը
յանձնարարեմ կարգաւ մեր երկրաստացի գիտնական
Մեարիկ վարդապետ Տեր-Մովսէսեանի «Հայ գիւղա-
կան տունը» գրվածքը, տպված 1892-ին Վիեննայի
Միխիթրեանց մօտ:

Դրադարան-ընթերցարանի մուտքը եղին չէ
ծածկում. իւրաքանչիւր տարի ղէֆիցիտ է լի-
նում 1500—2000 ռ.:

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ՐԻԳԱՅԻՑ

Յունվարի 26-ին

Այսօր արհեստագիտական ընկերութեան դա-
լիճում կայացաւ գրական-երաժշտական երեկոյ
յօգուտ պոլիտեխնիկումի չքաւոր հայ ուսա-
նողներին: Րիգայում այդ Soirée-ն իբրև նո-
րութիւն և օրիփնալ իր բովանդակութեամբ
հասարակութեան հետաքրքրութիւնն էր չա-
թել և չարախնդիր առաջ զանազան շրջաններում
խօսակցութեան նիւթ դարձել: Վարդապետ ցու-
ցահանգէսը գեղարուեստական ծախսով և հըմ-
տութեամբ կազմված գունաւոր աֆիշները և
ծրագիրները խոտանում էին հասարակութեան
բազմակողմանի հետաքրքիր զուարճութիւններ:
Նկատենք, որ հայկական երեկոյթ կազմա-
կերպելու խնդիր տարիներից ի վեր զբաղեց-
րել է հայ ուսանողներին, բայց, չնորհիւ հայ
գաղութի բացակայութեան և օտար ծանօթ-
ների սահմանափակ շրջանին յետաձգվել էր
աւելի բարեյայտը առիթն: Այսօր մեր տես-
նում ենք այդ իղձը փառաւորապէս իրագործ-
ված և չենք կարող չարտայայտել հրապարա-
կով մեր ուրախութիւնը ի պատիւ այն փոք-
րիկ խմբի, որի վրա ծանրացել էր երե-
կոյթը գումար բերելու հարցը, մի երեկոյթի,
որը, չը նայած մանր մուկ պակասութիւննե-
րէն իր աւելողութեամբ ընդհանրապէս աջող-
վածներից պէտք է համարել:

Առանձնապէս գործին նպաստեցին պոլիտեխ-
նիկումի գիտնական պրոֆ. Վարդէն, թող տա-
լով որ սկզբնական փորձերը ինտիմալ
առեղիւստիւններից մէկում կատարուին, ապա
պրօֆ. Սեդէլ, իբրև պատասխանատու կառա-
վարի, ամեն բարեկրօնութեամբ կատարեց իր
վրա սիրալիք ընդունած ծանր պաշտօնը:

Երեկոյթը պատուեց իր ներկայութեամբ գե-
ներալ-լէյտենանտ Պաշկով, Լիֆիլանդայի նա-
մանապետը Ներկայ էին նաև ուրիշ բարձ-
րաստիճան հիւրեր, պոլիտեխնիկումի պրօֆե-
սորներ և քաղաքի ընտիր հասարակութիւնը:

Դիւանաւոր դաշխոյժը զարդարված էր արեւելեան
ծախսով, կովկասեան պապողեն կտորների
չերտերը, գորգներ և կապերոններ ծածկել էին
պատերը. իսկ արևադարձային փայլման և ճոխ
բոյանքից դուրս էին ցցվել գեղեցիկ վրաններ
և կիսակներ, ներսից ծանրաբեռնված լինելով
գէշերով և արեւելու տեմպերամենային և ծով
բնաւորութեան յատուկ փափուկ և գոգտիկ
կահ-կարասիքով: Աստուղ պարերի ժամանակ
տիկիները և օրիորդները ծախում էին շամ-
պան, ծաղիկներ և օտարոտ հիններ: Բազմա-

Իմ ուղեւորութեան միջոցին կանց առի Ա-
լեքսանդրօպոլ, Կարս, Երևան քաղաքներէն
գաւտ **) Շիրակայ դաշտին երկաթէն, Արա-
գածոտան, Ապարանու դաշտին և անտի դէպի
Արարատեան դաշտը իմնող ճամբուն վրա մին-
չե էմիմանին պատահածս բոլոր դիւրեր ու
վանքերու մէջ: Որ բարձունքի վրա կամ սր
ձորի խորը կորած մի քանդուածք որ նշա-
նայի՝ դնացի քովը: Այսպէս էր որ տեսայ Հաղ-
րատ ու Սանահին, Մարմաշէն, Ուղուզլի,
Ղոզլիճայի, Արկինայի, Զրիւրու աւերակ և կի-
ղեցիները: Խնայվա՛ր, և ստորոտը ձորափնջի
Աշտ ու Գաղիկ թաղաւորների եկեղեցիներն
ու դամբարանները, Հատիճը, Սաղմոսախա-
նը, Յովաննապոլսը (բոլոր տեսանկերէս
մէջ) ամենն չքեղ և նուրբ): Մուղին, Աշտա-
րակու հին ու նորերը, Օշակները նոյնպէս, էլ-
միաճիւր, իր Հորիփա՛մէ (հայ եկեղեցական
ճարտարապետութեան ամենն պարզ և միան-
գամայն գեղեցիկը), Գալիանէ և Շողակաթի
երրորդութիւնովը—ապա Սևանայ վանքը և
հուսկ Մաղկաճորի (Դարաշինակ) կրկին սիրուն
վանքերը և այլն:

**) Որոնց միջոցով մի քան մի հին «մասնաւորի բնա-
կարան» թվագ աւերակ չի կայ:

Թիւ երկնորական գունաւոր լամպաները հանա-
գիւսաւոր տեսք էին տուել դահլիճին Մի ու-
րիչ սենեակի անկիւնում կանգնեցած էր Վիտ-
կանան միկիտանը, որի ճակատի «HO YB3A3AЙ
ГОЛУБИЧЕ» մակագրութիւնը քիչ չը ծիծաղեց-
րեց հանդիսականներին: Վերջիններս ներս էին
մտնում իսկական Կախէթի գինու համը տես-
նելու և ուշադրութեամբ գնում գինու տիճոր-
ները, տակաւները և այլն: Սպասաւորում էին
ուսանողները կինտայի հագուստով: Միկիտանի
առաջ մինչև լոյս անդադար պարում էին լէզ-
գինկա, կինտուրի, եպլի և այլն գուռակներ
և հարկաւոր ձեռքերի ծափերի և «տալի»
ների ուղեկցութեամբ:

Չաւետի բաժինը կազմված էր ամենայն
խնամքով: Ոչինչ չէր պակասում: Խմելու և
սօլօ երգ, դաշնակ, ջութակ, վեօլոնչէլ, ապա
դէկլամատիւն, կովկասեան պարեր, կենդանի
պատկերներ և այլն: Բոլոր մասնակցողները
պատկանում էին առաջնակարգ ուժերին, թէ
գերասանները և թէ սիրողները: Պարողները
(լէզգինկա-պար) Նարմանխանեան և կինտու-
րի-պար. Լիւնիան) յատկապէս երկուքի Նա-
մար հրաւիրված էին Պետրեբուրգից և անա-
գին կենդանութիւն մտցրին: Նրանք ստիպված
էին մի քանի անգամ կրկնել պարը, արժանա-
նայով հասարակութեան բռնն ծափահարու-
թիւններին:

Երգեցիկ խումբը երկու սեռի անձինքներին
բաղկացած էր 60 հոգուց, կանայք—Ալալայի
հագուստով, իսկ տղամարդիկ Մշեցու տարա-
զով: Ներդաշնակ և գեղեցիկ երգիչներ օր-
կեստրի հետ հայերէն բառերով Կարինի և Ջէյ-
թունի մարչերը, Կազաչէնի-լոյս գրած *):

Ժամը 1-ին ակումբից ելաւորական պարերը,
տեկնով մինչև առաւօտեան 6-ը:—Ապա հաս-
րակութիւնը գոր սրտով հեռացաւ դահլիճից՝
տանելով իր հետ ամենայն յիշողութիւններ և
ուպաւորութիւններ:

Ինչ վերաբերում է մուտքին հաղել թէ խո-
շոր եկամուտ լինի, ծախսերի շատութեան
պատճառով, որոնց քանակութիւնը, կարծեմ,
մօտ 2000 ռ. է համարում: Բայց, յուսանք որ,
ուսանողները քննա չեն կրի, քանի որ մեր այն
հայրենակիցները Կովկասում, որոնց ուղարկ-
ված են պատուաւոր հրաւիրատուներ, ինչպէս
մէջտ, նաև այս անգամ չեն ուշացնի իրանց
զրամական նուիրատուութիւնները:—Տեղական
թէ գերմանական և թէ առաջ թերթերի կար-
ծիքները երկուքի առիթով նոյնպէս նպաս-
տաւոր են:

2. Գեղամեան

ՆԱԽԱԿ ԽՄԲԱՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 7-ին

Յունվարի 26-ից սկսած հանգուցեալ Ադա-
մեանը կովկասեան մասերի ուշադրութեան
գլխաւոր առարկան էր: Գրեցին շատ բան,
գրեցին ոչ միայն Բայց, այլ և ուսուցիչ և վրաց
լրագիրները, թէ: Թիֆլիսում և թէ Բագուում
հրատարակվողները: Եւ յոյս ունեւ, որ «Մշա-
կի» խմբագրութիւնը ինձ թոյլ կը տայ, գուցէ
ամենից վերջը, մի երկու խօսք էլ իմ կողմից
ասել:

Հանգուցեալ Ադամեանը իմ ամենամօտիկ

*) Ի դէպ ցանկալի է փութով հրատարակված տես-
նել հանգուցեալ Գ. Կարա-Մուրզայի երգերը, որով
հայկական երաժշտական ազգայնականութեան հարա-
տացած կը լինի ընտիր երգերով: Առանձնական երե-
կութիւնի համար այդ անգնահատելի գանձ կը լինի:

Դարերու արևին տակ խորված, այրած,
սեցած առակը կամ ուսուցիչ և մերթ ընդմիջին
կործանած տաճարներ, որոնց մէջ մտնելիս թանձր
խոնավութիւն մը սառն թոյնի պէս կը տա-
րածվի թոքերուդ մէջ. ճգնարաններ, դամբա-
րաններ, որոնց մէջ օձեր օղակ-օղակ պտուկի
են. մատուռներ, որոնց պատերը և ձեղուններ
բորբոսած են կարծէք, զանգակատներ, գմբէթ-
ներ, արքայազն քաղաքով տանիքներով՝ որոնց
վրա խնկն ու խօլ բռնակալութիւն մը հովէն
կը տատանի. ամեն տեղ և մեծ քանակու-
թեամբ խաչքարեր, մահարձաններ, որոնց քան-
դակը ու արձանագրութիւնը կրել է մահուաւ:
ամալացած ու կործանած ամրոցներ (կատա-
րեալ արծուի բռնիք), ուր աւազակներ և բուեր
կը բնակին. մի յաղթական կամար, քանի մը
քանդած կամուրջ, որոնց կոտորած թափված
կամարներու յանգուցն դարձուածքը յորձա-
նուտ միւրերորու վրա կը կախվի, և ոչ մի տեղ,
բնաւ մի բնակարանի հետք...:

Անցեալ տարի՝ մի, այս տարի՝ երկուս ու
կէս ամիս տեղե թափառումս: Հորիւրաւոր
մղոններ տօթագին տապին տառապանքին ճա-
կատ առած, լերկ ու մերկ Հայաստանին սար
ու դաշտերէն, ուր եթէ չէին եղել անվերջ,

բարեկամն էր. նրա յիշատակը նուիրական է
ինձ համար, երբեք չի մոռացել իմ արտի մէջ:
Այս պատճառով եւ մի առանձին հետաքրքրու-
թեամբ էի վերաբերվում այն ամենին, ինչ
կատարվում էր հայ բեմի անմահ առողի յի-
շատակին Տեսնելով, լսելով ամեն ինչ, ինձ
թուում է, որ աւելորդ չեն լինի իմ երկու
խօսքն էլ:

Նախ և առաջ պարտք եմ համարում յայտնել
հայոց դրամատիկական ընկերութեան վարչու-
թեան, որ նա շատ անշուք կերպով էր պա-
րաստել Ադամեանի յիշատակին նուիրված գե-
րեկույթը: Վարչութեան այդ անհոգութիւնը,
հաւատացած եմ, անբաւականութիւն պատ-
ճառած պէտք է լինի Ադամեանի անունն ու
յիշատակը անկեղծ կերպով պաշտօնողներին:

Դրամատիկական ընկերութեան այդ անար-
տութեան, ստան վերաբերմունքին միանգա-
մայն համապատասխանում էր ժողովրդի ան-
սիրտ վերաբերմունքը, որի ցաւալի արտայա-
տութիւնն էր Արտիստիկական ընկերութեան
կիսով չափ դատարկ դահլիճը:

Այդպէս եւ ինչեղ շատ տխուր փաստեր
անցեալից, այն ժամանակից, երբ Ադամեանը
կենդանի էր, երբ նա իր խաղով այնքան բարձ-
րացրել էր հայ բեմի գոտիւր: Մի ասող էր
նա, խորք ասող, այդ ընդունում էին ամեն-
քր Բայց ինչպէս էին մարդիկ վերաբերվում
այդ ասողին: Ադամեանին ամենքն էին վերա-
ւորում, թէ նրա բեմական ընկերները, իրանց
նրա տաղանդի երկրպագու ձեռնողները:

Եւ այժմ էլ ինչում եմ խօրհրտականքի մի-
րանար մի քանի հայ հարուստներին, որոնք
թատրոնում բազմում էին առջին կարգերում,
ամենից շատ էին ծափահարում Ադամեանին,
բայց բեմից դուրս ոչ միայն երես էին դարձ-
նում նրանից, այլ և հալածում էին:

Խեղճ Ադամեանը երբեք փող չուներ, ինչ որ
ստանում էր, իսկույն ծախում էր: Այդ դրու-
թեան մէջ նա խաւար ստիպված էր լինում
պարտք վերցնել իր կարծեցալ բարեկամնե-
րից: Եւ երբ խեղճ ժամանակին չէր կարողա-
նում վերադարձնել, այդ իսկ բարեկամները
սկսում էին զանազան լուրեր տարածել, ա-
նուանելով երկրի թաշուկի պէս ապրող խեղճ
արտիստին անապիւն և այլն: Պատմեմ մի փոք-
րիկ գէպ: Մի օր Ադամեանի ծառան վազում
է: Ինձ մօտ և յայտնում է, որ Ադամեանը սաս-
տիկ վրդովված է, կանչում է ինձ: Տուն մըտ-
նելուն պէս, Ադամեանը անկախ այլայլած՝
ասաց ինձ. «Բո սիրելի բարեկամին իր տան
մէջ անպատուում են, ախր եւն բարձրացում
նրա վրա, որ խփեն, իսկ դու այստեղ
չէիր, որ պաշտպանես ինձ. միթէ կարելի
է ինձ մենակ թողնել այսպիսի վայրենի մարդ-
կանց մէջ: Բանից դուրս եկաւ, որ Ադամեանը
իր բենեֆիսին տոնակ էր ուղարկել մի պա-
րոնի. այդ տոնակի գինը ուղարկված էր եղել
մի ուրիշի միջոցով, բայց Ադամեանը մոռացել
էր պէր, և երբ մարդ է ուղարկում այդ պա-
րոնին ինչեցնելու, որ պէտք է վճարել գինը,
պարոնը փոխանակ ասելու, որ փողը վճար-
ված է, փոխանակ ինչեցնելու, վազում է Ադա-
մեանի մօտ և այդքան վայրենի կերպով վի-
րաւորում է նրան: Այս գործը մինչ յանձնե-
ցինք դատաւորին, որի առաջ յիշած պարոնը
ստիպված եղաւ ներողութիւն խնդրել Ադա-
մեանից:

Ոչ ոք չէր ուզում իմանալ թէ ինչպէս է
այդում հայոց առաջին գերասանը: Ինչպէս
նա չը տուտալէր փողի պակասութիւնից, երբ
նրա ռոճիկը երկու հարիւր ռուբլոց չէր անց-
նում: Այդքան էլ նա առանում էր միայն
հինգ—վեց ամիս, և չը պէտք է մոռանալ, որ
իւրաքանչիւր նոր գերի համար պատրաստել
ստուծ չորեք հարիւրներ էին նստում:

Բայց այդքան բաւական չէր: Ադամեանը
շատ սիրտը բաց մարդ էր: Նրա տունը ուս-
տանեղի էր. ու աւել, որ չէր լինում նրա
մօտ: Նա հիւրասիրութեամբ էր ամենքին,
ծախումով իր վերջին ռուբլին: Եւ ի՞նչ գէպ
էր լինում ճաշել ընկերովի որ և է հիւրասիրող,
Ադամեանը ոչ մի գէպում չէր թոյլ տայ, որ

անհատնում արտերու հոռնքին հասած հաս-
կերը, որ անգառաւաններուն տալիս էին փու-
րած ասուեղէնի հովին չարժեքները կամ ջրի
մակերևոյթի վէտվտող տեսարան՝ կարելի էր
սրտապատուել:

Տէր Աստուած, ասում եւս. սա ինչպէս եղել
է, որ միմիայն հասարակաց շինութիւններու
մտորդներ կան: Ապա մասնաւորներ ինչպէս
էին բնակեցուցում, ասե՛ք թէ վրաններու տակ
էին անցնում: Ինչպէս եղել է, որ ընդհանուր
օրհասականի ընդհին երկրեցիք ու վանքեր
միայն համախառնաբար մնացել են ազատ:

Ե՛ր անոր համար, որ ժողովուրդներու մէջ
էր նրանք նոյն-իսկ Լէնկիթներին և Բուդայի
հրոսակներ են եղել է ինչ-որ մի գաղտնի վախ՝
անտեսանելիին և անխմանալիին փառաբանու-
թեանը համար կանգնած այդ տաճարներու
ձեռք չը տալու համար, և այն համայնական
անխոր քարուքանդի միջոցին մի խորհրդա-
ւոր երկիւղ ընդել է քանդող դատաւորներից:

Իրաւ է նաև, որ այնպիսի քանդակներ ուրու-
կանից պակաս մնացածը մասամբ լրացրել են
հայոց չընդ... աշխարհի պարծանքը վնասա-
Մասնաւոր և անգին Արաղածը, որոնք զոգ են
հանել երկիրը ամեն անգամ որ իրենց խառնա-

մի ուրիշը վճարէ հիւրասիրողին, թէ և ճաշողնե-
րի մէջ լինէին նրանից շատ հարուստ մար-
դիկ էր:

Բնական չէ, որ այսպիսի մարդը միշտ կա-
րօտ լինի: Եւ Ադամեանը միշտ աղքատ էր,
միշտ ոչինչ չուներ:

Եւ ինչում եմ նրա ընկերակից գերասաննե-
րից մէկին, որ համարեաւ ամեն գիշեր նրա
մօտ էր ընթերցում, գովաբանելով իր կերածն ու
խմածը: Աղքատ մարդ էր այդ գերասանը. և
Ադամեանը աշխատում էր ամեն կերպ օգնել
նրան, սոն օրերին հագուստներ էր նուիրում
նրա երեխաներին: Բայց երբ մեռաւ Ադամեա-
նը, այդ իսկ պարոնը, որ ապրում էր Բագ-
ուում, առաջին էր, որ հայտնեց նրա գերեզ-
մանը: Բայց ինչու դալ Բագուա Նոյն իսկ
Թիֆլիսում, Ադամեանի մահվան լուրը տա-
րածված առաջին իսկ օրը, ինձ մօտ հայ բեմի
վետերաններից մէկը ամենակեղտոտ խօսքե-
րով հայտնեց նրա թաւ գերեզմանը: Պատճա-
ռը այն էր, որ Ադամեանը, գալով Թիֆլիս,
մոռացել էր տուել այդ դերասանին:

Եւ այսպէս վաղվում էին այն մարդու հետ,
որին Ռուսաստանում, ամեն ներկայացումից
յետոյ, ձեռքերի վրա բարձրացրած էին տա-
նում մինչև նրա բնակարանը:

Անելի լաւ վիճակի մէջ չէր իմ ողբացեալ
բարեկամը իր հայրենիքում, Գ. Պոյսուա Յայտ-
նի է, որ Պոյսուա կատարեցին Ադամեանի բե-
մական գործունէութեան 25 ամեայ յօբերանը:
Ընտրված էր յատուկ յանձնաժողովով, որի ան-
դամներից մի քանիսը յայտնի հարուստներ էին:
Յօբերանի օրը, ի միջի այլոց, պակաս մատու-
ցեց և այդ յանձնաժողովի Բայց ինչ: Այդ
պակի փողը յանձնաժողովի անդամները ի-
րանք չը տուին, այլ հանցին Ադամեանի
ստուծ ներկայացման մուտքից...:

Ահա այսպէս էր Ադամեանը իր կենդանու-
թեան ժամանակի Եւ մոռնալուց յետոյ էլ կի-
սով չափ դատարկ մի դահլիճ, անհոգութեամբ
կազմված մի գերեկով: Նրա յիշատակը յար-
գելու համար...:

Այգեքանդր Ստեփանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻ

Կիրակի, փետրվարի 9-ին, Թիֆլիսի գումա-
յի ձայնաւորները, մասնաւոր խորհրդակցու-
թեան ժամանակ ընկելով քաղաքային ուսու-
նարանական կօմիտէի գոյութեան օրինակա-
նութեան հարցը, վճեցին բողոք ներկայացնել
կոմիտէին: Անհատին Թիֆլիսի նահանգական
ատենակի վճեք գէպ՝ այդ կօմիտէի կազմա-
լուծելու վերաբերմամբ:

Թիֆլիսի այգեքանդական ուսումնարանի
անուսական մասնաժողովը միջնորդութիւն է
յարուցանում երկրագործութեան և պետական
կալուածների միջնորդութեան առաջ, որով
թոյլտուութիւն է խնդրում բանալու յիշած ու-
սումնարանում չերամպագանութեան կուրսեր:

Դերասանուհի Կ օ մ ր Ժ և վ ա կ ա յ ե ա
չաքաթ օր, փետրվարի 8-ին, դուրս եկաւ Օռ-
տօփուկ «Дикарка», իսկ կիրակի օր, փե-
տրվարի 9-ին, Չելսովի «Ляда Важа» պիես-
ներում Առաջին պիեսի մէջ գերասանուհին
շատ մեծ աղողութիւն ունեցաւ: Վարիայի դե-
րը ձեռնակարված է Կօմիտէի անհատական հա-
մար, ընդորոշին համապատասխանում է նրա
տաղանդին և նրա խաղի լաւ ձեւերին: Այդտեղ
կային և չարածին խաղ և հեգնութիւն և ծաղր
և հասարակ, փոքր ինչ կոպիտ չարութիւններ և
զգացմունքների բռնն արտայայտութիւն, այն
ընդոր, ինչով որ ուժեղ է այդ գերասանու-
հին Սերկ, երկուշաբթի, փետրվարի 10-ին,

բաններու գեհնային չնչափողնեղ է եկել վիթ-
խարի չնչառութեան մը ընդհին և տխրանական
սարսուռ մը կատարել վերջացրել է հրոսակին
կործանումի գործը:

Ինձ ասել էին, որ մի տեղ կայ Հայաստա-
նում, ուր անպատճառ կը գտնէք ձեր ուղածը
և աւելին: Այդ Անին էա: Ուստի եւ Անի գնացի
մասնաւորապէս ու Նկարագրութիւն և տպա-
ւորութիւններ չեմ գրում: Միայն սա ասեմ, որ
չորս տարի Հոսով Գոտուսին մօտ բնակեցայ,
երկու անգամ յատկապէս Պոմպէյ գնացի և
ոտով ման եկայ Պայայի ծովածոցին ամբողջ
եղեքը. տեսայ Պարթիները և Բեստուսի տա-
ճարը, Կողխէճն, Պարագալայի և Դիոկլետիանոսի
բաղնիքներու ամենի մնացորդները. տեսայ
1855-ի պատերազմին այրված Սևաստօպօլը և
դեռ շատ մը բաներ: Բայց ոչ մի տեղ վրդովմուն-
քի անպիսի սաստիկ զգացումից չի ցնցեցի,
ինչպէս Անիում: Եւ կատարեցայ, տեսնելով այն-
պէս մի անհասարկ քանդուածը, որի յանցանքը
որքան ալ որ վերագրվի Հայաստանի հողին
հրաբխային բնութեան՝ բայց էլի անկեր և է,
որ մի անսիրտ և անուրի եղեռնագործութեան
արդեւոր է հենց այնպէս ինչպէս որ մնացել է:
«Գար քարի վրա չի մնայ» համբաւաւոր

նա հանդէս եկաւ Սուփօրիսի «Вопросъ» պիե-
սում, որ նորութիւն է ուսաց բեմի վրա:

Մեզ հաղորդում են հետեւալը. «Թիֆլիսի
Հակա-արկօճայական ընկերութեան Հաւաքարի
բաժանմունքը—(պ. Սուրաշկոյի) թատրոնում,
կիրակի, փետրվարի 9-ին, տեղի ունեցաւ ցե-
րեկվայ հանրամատչելի ներկայացումս: Ներ-
կայացրին «Բոյր և Եղայր» դրաման: Թատ-
րօնը գրաւել էր բաւական մեծ ժողովուրդ:
Պ. Ամօ-Պարադեան և տ. Չաքէլ իրանց դե-
րերը լաւ կատարեցին, իսկ ինչ վերաբերում է
մնացած սիրողներին, նրանք, շատ քիչ բացա-
ռութեամբ, օրինաւոր և խելացի առաջ տա-
րան իրանց դերերը: Մասնաւոր լաւ և սրտո-
ւոռ էր Տ-րդ գործողութիւնը, որը ներկա-
յացնում է բերդ, ուր բանտարկեալները յու-
սահատ գործութեանը աղօթում են Շնորհիւ պ.
Բերինեանի երգեցիկ խմբի, շատ աղեղեցիկ ան-
ցաւ գործողութիւնը և տպաւորութիւն թո-
ղեց:

Թիֆլիսի քաղաքային ուսարվայի նիստում,
որ տեղի ունեցաւ փետրվարի 7-ին, Ֆինան-
սական և հացի ու մօի վրա սակագներ նշա-
նակող մասնաժողովների անդամների մասնակ-
ցութեամբ, քննեց Մ. Քեմադարեանի առաջար-
կութիւնը՝ դնելու նրանից 100,000 ռուբլով
նրա չղեկարծ հացագործարանը: Այս առաջար-
կութեան հետ միասին նոյն ժողովում քննվում
էր և ուպրավայի անգամ Կօկաեվի գեկու-
թեամբ քաղաքային հացագործարաններ բանա-
լու հարցի վերաբերմամբ: Միացեալ նիստը
կարծիք յայտնեց յօգուտ վերջին հարցի, բայց
մերժեց Ֆեմադարեանի առաջարկութիւնը՝ ան-
համապատասխան գտնելով նրան քաղաքի չա-
հերին:

Երկրագործութեան և պետական կալուած-
ների միջնորդութիւնը յետոյ կը ներկայացնէ
պետական խորհրդի քննութեան մի օրինագիծ,
որ վերաբերում է գիւղատնտեսական կրթու-
թեան Այդ օրինագիծով, ի միջի այլոց, պէտք
է հիմնվեն այնպիսի ասորնակարգ գիւղատն-
տեսական դպրոցներ, ուր կընդունվեն նաև
հասակաւոր անգործաւոր անձինք՝ գիւղատնտե-
սական աշխատանքների մէջ գործնականապէս
վարժելու համար:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդու-
թիւնը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի
լրագիրները, գիւղեց ուսումնարանական չոր-
ջանների հոգաբարձուներին մի չըվաբերակա-
նուի, որով առաջարկում է նրանց՝ ներկայաց-
նել միջնորդութեան իրանց կարծիքները աշու-
կերաների և աշակերտութիւնների համար ամա-
րանոցներ և գաղութներ հիմնելու հարցի մա-
սին:

ԲԱՆԱԽԱՆԻԻԾ Մեզ գրում են, Վկասութիւն-
ները և կողպաւոր Բալախանիում վերջերս այն-
քան շատացել են, որ լսելիս մարդու վրա
այնքան էլ մեծ աղեղեցութիւն չեն գործում: Օր
չի անցնի, որ չը լսեմ, ինչ այս ինչ մարդուն
սպանել են, կամ այս ինչ տեղը օր ցերեկով
մարդ են կողպաւոր: Սակայն սպանութեան
այնպիսի դէպքեր են տեղի ունենում, որ մարդ
տեսնելիս ապշում է և արիւնք երակները մէջ
սառնում: Շատերից մէկը Փետրվարի 2-ին,
գիշերը, անպայտ չարագործներ մտնում են եր-

անձեքը, իր լիակատար իրագործութիւնն է գտել:
և որպէս զի չարեքը կատարեալ լինի՝ դարեւ
ի վեր հիմնադրատակ մայրաքաղաքը իւր անփո-
խարկելի քարահանք մը ծառայել է չըլակայ-
քի գողերու և յափշտակիչներու... *):

Այսպէս ուրեմն, հայ պատմական անցեալի
այդ նշանաւոր մայրաքաղաքում էլ դուր ան-
ցան յոյսերս: Դեռ չի կրցայ գիտնալ, թէ ինչ-
պէս էր մեր հիւրերու մասնաւորաց բնակարան-
ներու ոճը, ինչ գիծեր ունէին նրանց դուռներ,
պատուհաններ և այլն:

Անիում հարկ է լուրջ պեղումներ ընել, և
անպատճառ յոյս ունիմ, որ այս հարցի լու-
ծումին կը մօտենանք այդպէս:

Ա. Ֆեթվանեան</

կաթալաճառ վարդապետացի Շաւարշ Մալ- խառնանի բնակարանը, դարձնի հարուածով սպանուած են թէ նրան, թէ նրա մօտ ծառայող մի ուսու կնոջ և մի թուրքի ու ծանր վիրաւորուած են աղախնու 9 տարեկան աղջկան Լե- տեալ օրը սպանութեան տեղն են գալիս Բալախանիի ոստիկանութիւնը, քննիչը և հի- ւանդանոցի բժիշկը Շնթաղովում է, որ սպան- ված թուրքը հէնց աւաղակներէջ մէկը պէտք է լինի, որ դիմադրութեան ժամանակ վիրա- ւորվել է և որին ընկերները, չարագործութեան հետքը ծածկելու համար, հէնց իրանք են ըս- պանդանոցում մորթված ոչխարներ, զուրա- հանցիկ և բարձեցին սպլերի վրա Դժբաղդ Մալխասեանին չարագործները դաշոյնի տան և վեց վերջէն հասցրել Սալը չարովեց դէ- պի հիւանդանոց, իսկ ոստիկանութիւնը դառ- նալով դէպի հաւաքված ահաբիւն ամբոխին, հրամայեց ցրվել:

ՉԱՐԴԱՆԼՈՒ դիւղի (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Փետրվարի 6-ին, երեկոյան ժամը 8-ին մէկ քառորդ պակաս, բաւական ուժեղ երկրաշարժ գրգռվեց, որից 15 րոպէ տառալ ևս մէկ թոյլ շարժում եղաւ. իսկ ամբիս 7-ին, մօտ ժամի 11/2-ին կէսօրից յետոյ, դարձեալ երկու թոյլ շարժում եղաւ: Չինը ամբիս 5-ից մինչև 7-ի գիշերը անդադար գալիս էր, այն- պէս որ ձիւնի շերտի հաստութիւնը 9 1/2 վեր- չելից աւել էր Պատմում են, որ այսպիսի խոր ձիւն չեն տեսած գիւղացիները այստեղ: Կար- մուկ հիւանդութիւնը և հազը երեխաներից զոհեր են տանում համարեա ամեն օր: Եթէ տաք եղանակ կամ արեւ չը լինի մի քանի ժա- մանակ և ձիւնը չը հալվի, դժուար կը լինի գիւղացիների համար, խոտի գինը բարձրա- նում է, որոտը չափազանց է: Սալըի երթե- ւեկութիւնը Դալարի կայարանից դէպի Գետա- բէկի պղնձագործարանը դժուարացել է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍԱՆԻՑ

Թաւրիզ, փետրվարի 1-ին
Թաւրիզից գրված և ձեռ թերթի մէջ լոյս տեսած թղթակցութիւնների մէջ յաճախ չեղ- վել է այն հանգամանքը, որ Պարսկաստանը, գտնէ նրա հիւսիսային մասը, գտնվում է Ռու- սաստանի զօրեղ ազդեցութեան տակ և այդ ազդեցութիւնն այնտեղ օր ըստ օրէ ուժեղա- նում է: Շտապում են ձեռ հազորդի, որ ուս- սաղ ազդեցութիւնը Պարսկաստանի հիւսիսա- յին մասում այժմ մտնում է իր նորագոյն ֆազիսի մէջ: Պարսիկ կառավարութիւնը չը կարողացաւ ներկայ տարվայ փետրվարի 1-ին (ն. տ.) վճարել սահմանած գումարը Ռուսաս- տանից իր արած փոխառութեան տոկոսը հանգցնելու համար և ուստաց կառավարու- թիւնը կարողացել է արել, որ այսուհե- տե մաքսատների հատկութիւնը, որոնք բացա- ուպէս գնում են պարսից փոխառութեան տոկոսից հանգցնելու համար, ստանան Պարս- կաստանի ուստաց բանկը և կամ նրա բաժան- մունքները, իսկ որովհետք չը կան, այն- տեղ յատուկ այդ նպատակով նշանակված գոր- ծակախնդր: Այդ քայլը դեռ ակնդէմ է, զորն անուշտ կը հետեւն նաև ուրիշ քայլեր և դու- ղէ մօտաւոր ապագայում հիւսիսային Պարս- կաստանի բոլոր մաքսատները կանցնեն ուս- սաց ձեռքը:

Այժմ արդէն լուրեր են պտտում, որ ուս- սաց կառավարութիւնը մտադիր է նշանակել ուսու վերահսկիչներ (контролёръ) մաքսա- տներից հատկութների վրա հսկելու համար: Ռուսաց կառավարութեան ջանքերով մաքսա- տների տարիքներն էլ փոփոխութեան են- թակցեցին այս օրերս Պարսկաստանից դուրս տարվող ապրանքների համար, ի բաց առած մետաքսը և բուրդը, մաքս չէ ստացվում, իսկ Ռուսաստանից ներմուծվող ապրանքների մաքսը իջել է 80% (առաջ 50% էր): Արևմտեան Եւ- րոպայից և ուրիշ երկիրներից եկող ապրանք- ների մաքսը բարձրացել է. թէյի մաքսը, որ առաջ 50% էր, այժմ դարձել է 75%: Ռուսա- կան մի ընկերութիւն պայմանաւորվում է պարսիկ կառավարութեան հետ Ջուլֆայից մինչև Թաւրիզ խճուղի շինելու և մեծ հաւա- նակաւորութիւն կայ, որ պարսից կառավարու- թիւնը համաձայնվի:

Բայց մենք անարդար կը լինէինք, եթէ չը չեղանէինք այստեղ նաև այն քայլերը, որ ա-

նում է ուստաց կառավարութիւնը այս երկ- րում լուսաւորութիւն տարածելու նպատա- կով: Ինչպէս յայտնի է ձեռ, ուստները բացել են թեհրանում մի դպրոց, որ իր ծրագրով համապատասխանում է ուստաց բնակաւն- գիմնադիրներին և, ինչպէս առում են, աշո- ղութեամբ մրցում է թէհրանի պետական ու- սումնարանական հաստատութիւնների հետ: Մտադրութիւն կայ բանալ այդպիսի դպրոց նաև Թաւրիզում և Ն. Բ. գահաժառանգը խոս- տացել է իր բարոյական և նիւթական աշու- ցութիւնը այդ դպրոցին Պարսից ժողովրդի կրթված դասը շատ լաւ է տրամադրված դէպի ուստները և նրանցից է սպասում այս երկրի մտաւոր և բարոյական վերածնութիւնը:

Ինչ վերաբերում է մեզ, մենք կը ցանկա- նայինք ամբողջ արտից, որ ուստները հանդի- սանային այս երկրում ոչ միայն իրեն այս երկրի բնական անսպառ հարստութիւնների շահագործողներ, այլ և լուսաւորութեան պի- նէրներ: Այն ժամանակ միայն ուստները իրա- ւունք կունենան չնորհակալութեան պարսիկ ժողովրդի կողմից և այն ժամանակ միայն նը- րանք ծառայած կը լինեն իրանց կոչմանն Ա- րեւելքում:

6. Կարախանեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆԸ

— «Մալիկ» թղթակցութիւնների մէջ Բիւ- լինից արդէն մանրամասնաբար նկարագրված էր այն երեկոյթը, որ հայ ուսանողները կաղ- մել էին այնտեղ մօտ ժամանակներուս: Այ- սուամենայնիւ աւելորդ չենք համարում հա- ղորդի հետեւալ տեղեկութիւնը, որ երեւոյց այդ մասին «C. П. ВѢД.» լրագրում «Բերի- նում մօտ օրերուս յայտնի գանիացի կրտսի- կոս Գէորգ Բրանդէս մի գաւառագետութիւն կար- ղաց հայկական հարցի մասին Դաւաթաւութեան գլխաւոր նպատակն էր միադարձել Եւ- րոպային այն անտարբերութեան համար, որ նա ցոյց է տալիս դէպի հայերը, և Գերմա- նիային նրա արեւելեան քաղաքականութեան համար: Նշանաւոր կրտսիկոսին ժողովել էր լսելու ահագին բազմութիւն, գաւառագետութեա- նը ներկայ էին Բերլինի ամբողջ արտասօհրա- տիկական դասակարգը, բոլոր աշիք ընկնող դրականագէտները: Գէորգ Բրանդէս իր դա- սախօսութեան սկզբում համառօտապէս նկա- րագրեց Հայաստանը, Փոքր-Ասիայի այդ Շվէյ- ցարիան, ապա ընտրուեց հայերին, որոնց ա- նունեց եւրօպական քաղաքակրթութեան ա- ուջապահներ Ասիայում և վերջապէս անցաւ այն անգլիկութիւնների և հայաձայնների նկա- րագրութեան, որոնց ենթակրկում են հայերը Թիւրքիայում: Տանջանքների պատկերները, որ նկարագրում էր Բրանդէս, այնքան ցնցող էին, որ շատ տիկիներ չը կարողացան զգալի ի- րանց արտասուքը, իսկ մի քանիսը նոյն իսկ ստիպված էին հեռանալ դահլիճից՝ չը կարո- ղանալով զգալի իրանց հեկեկալանքները: Տալա- ւորութիւնը աւելի ևս զօրեղ էր այն ժամա- նակ, երբ ճառասօսը անցաւ Գերմանիայի պա- տասխանաւորութեան հարցին այդ տանջանք- ների համար: Իր ճառի այդ մասում Բրանդէ- սի խօսքը հասաւ ամենամեծ ոյժի: Կնկնեցին այնպիսի խիստ մեղադրանքներ, որ երբեք չէր լսել Գերմանիան և որոնց առաջ նախադրում են այն ամենախիստ յարձակումները, որ իր վերջին գեկուցման մէջ սօցիալիստ Բեռլինցի գործեց գերմանացիների վրա հայկական հար- ցի մասին խօսելիս: Բրանդէս զրակաւ կեր- պով յայտնեց, Աւստից Գերմանիայի բարեկա- մութեան Թիւրքիան հնար չէր ունենալ գոր- ծելու այն բոլոր հեղաշրջում ոճիւրները, որոնք լսված էին XIX դարում: Սյո խօսքերը կա- րող են դուր չը գալ գերմանացի չօլիկիստ- ներին, բայց և այնպէս նրանք զուտ ճշմար- տութիւն են: 1896 թվին, երբ թիւրքական ֆանատիկոսութեան Կ. Պոլսում գոհ գնացին հազարաւոր հայեր, Գերմանիան ընծաներ էր փոխանակում Թիւրքիայի հետ: Կնկնեցին բա- րեկամութեան Այդ յիշողութիւնը ամեն մի գերմանացու համար, որ գնահատում է իր հայրենիքի պատիւը, պէտք է շատ դառն րօ- պէներ պատճառէ պէտք է լցնէ նրա հոգին կսկծեցնող ամօթով:

— Ռուսիական կառավարութիւնը ուղարկել է եւրօպական միջնատրութիւններին մի չրջա- բերական, որի պատճէրը հաղորդել է նաև Բ. Դրանը: Այդ չրջաբերականում Բալկանեան թերակղզու վրա տեղի ունեցող բոլոր լուզ- մունքների պատասխանատուութիւնը նա դնում է Թիւրքիայի և Բուլղարիայի վրա: Գաղաւա- կան չրջաններում Ռուսիայից այդ քայլը բա- ցատուում են նրանով, որ նա դիտաւորութիւն ունի գործնական դեր կատարել այն դէպքում, եթէ Թիւրքիայի և Բուլղարիայի մէջ պատե- րազմ ծագի դարանալ:

ՄԵՆԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՅԼՈՒԹԻՒՆՆԵՐ

8 փետրվարի
ՊԵՏԵՐԲՈՒԳ. Փետրվարի 7-ին էրմիտաժի թատրոնում Բարձրագոյն ներկայութեամբ կա-

յացաւ ներկայացում, իսկ յետոյ—ընթերց և պարեր:

Կ. ՊՈԼԻՍ. Զանազան կառավարութիւնների նորերն արած յայտարարութիւնները համա- ձայնում են թիւրքաց բոլոր գեապանների գե- կուցումների հետ, որ մեծ պետութիւնները եռանդով կը պաշտպանեն Աւստրո-Ունգարիայի և Ռուսաստանի բոլոր գործողութիւնները Գերմանիայի միջնեւ վերաբերմամբ, և դա տը- պաւորութիւն է գործում Իլլիրի-Բոսնիոյում: Ինչպէս երեւում է, կարելի է յուսալ, որ բե- Ֆորմները նախագիծը կընդունվի:

ԴՆԵՉԻՆ. «Dresdener Nachrichten» առա- կում է «Leipziger Zeitung»-ի հաղորդած տե- ղեկութեան դէմ, թէ սպառօնական թագաժա- ժանդուտ հաւատարմատարները եռանդով բո- ղրքեցին զատավճաի հրատարակման դէմ: Լրա- գիրը հաստատում է, անհերքելի տեղեկու- թիւնների հիման վրա, որ դրա նման ոչ մի -ի բան տեղի չէ ունեցել:

Կ. ՊՈԼԻՍ. Մի յանձնաժողով, բաղկացած պետական խորհրդական Բիշոֆ-Քլայն, գեներա- րալ Բանդեր-Փայպից և արանական ազգու- թեան ուրիշ բարձրաստիճան անձնիքներից, ձանապարհ ընկան Ալբանիա՝ հանգստացու- ցիչ կնքողով ազդելու մաքերի վրա և անհրա- ժեշտ յատուկ թէֆորմներ մշակելու համար:

ԼՕՆԴՕՆ. «Times» ղգգնութիւն է յայտնում Կրանթօրնի հաղորդութեան դէմ, որ նա արեց չարքաւթի համայնքների ժողովում: Լրագիրն ասում է, որ ժամապատուութիւն է պնդել, որ իր թէ երկրի գրութիւնը Պարսկաստանում անդադար չէ փոխվում ի վնաս Անգլիայի և յօգուտ Ռուսաստանի:

ՎԱՇԻՆԳՏՈՆ. Պատգամաւորների ժողովը հա- ւանութիւն տուեց Միացեալ-Նահանգների նա- խագահի պաշտպանութեան համար ձեռնար- կութիւնների օրինագիծ վեաբերմամբ կազմ- ված յանձնաժողովի ղեկուցման Օրինագիծը մանկան պատիժ է սահմանում նրա համար, ով նախաժողովի գիտաւորութեամբ կը օգա- նէ նախագահին, փոխ-նախագահին կամ այն պաշտօնական անձին, որին կարող են անցնել նախագահի պարտաւորութիւնները: Նոյնպէս մանկան պատիժ է սահմանվում նրա համար, ով կը սպանէ տաք պետութիւնների գեապա- ններին: Նախագիծը պարտաւորում է որոշում- ներ, որոնք ուղղված են անհիւսանականների դէմ, որոնք արգելվում է գաղթել Միացեալ- Նահանգները և բնակութիւն հաստատել այդ- տեղ:

ԼՕՆԴՕՆ. «Standard» լրագրի Պարիզի թղթ- թակիցը իմացաւ, որ Դէլիյանէ մեծ նշանաւոր- թիւն է տալիս վերջնական համաձայնութիւն կապելուն Անգլիայի հետ Մարօկիօի ապագայի վերաբերմամբ և պատրաստ է Ֆրանսիական ազդեցութեան չըլնանք դուրս հանել չիւրտը Տանձէրի և Յեռուտայի միջև գտնվող ափի եր- կարութեամբ: Նրա վարչութիւնը կարելի է ասոյ Սպանիային՝ արգելելով այնտեղ ամբու- թիւն կառուցանել: Ֆրանսիայի ձեռքերը կար- ձակվէին Մարօկիօի մնացած մասի վերաբեր- մամբ, որի վերջնականապէս տիրելը համա- րում է կենսական պահանջ՝ Ֆրանսիական կա- րուածքների ապահովութեան և միութեան տե- ւակէտից հիւսիսային Աֆրիկայում «Standard» նկատում է, որ Դէլիյանէ հաղորդեց այդ ծրա- գիրները Լանսդունին:

9 փետրվարի

ՀՈՒՄ. Պատգամաւորների ժողովը ընդունեց Մարօկիօի սիւսեմով անթիլ հեռագրի կալա- րան կառուցանելու առաջարկութիւնը, որը պէտք է ծառայէ նոյնպիսի կայարանների հետ հաղորդակցութիւն հաստատելու համար հա- րուային Ամէրիկայում: Միջնաւոր Գալիսիայի պատեց, որ Մարօկիօ զիտաւորակցութիւնների իտալական կայարանը հաղորդակցութիւնների կենսաբանական կէտ չինել ամբողջ երկրագնդի անթիլ հեռագրի համար:

Կ. ՊՈԼԻՍ. Գերմանական և իտալական զին- տրական գործակալներ Սալոնիկ գալու: Նա- մին տարածված տեղեկութիւնը արտասահմա- նեան մտնում է մէջ անհիմն է. գերմանական և անգլիական գործակալները այստեղ են, իսկ իտալական գործակալը Յունաստան և Բուլղա- րիա ձանապարհորդելիս անցաւ Սալոնիկի վը- րայում:

ԿԱՐԱԿԱՍ. Մարակաբոնում տեղեկութիւն ստացվեց, որ կառավարական զօրքերը ջար- դեցին վէնեցուէական ապստամբներին: Նրանց ձեռքն ընկան թնդանօթներ, շատ զէնքեր և ոսպմամթերքներ:

ՊԱՐԻՉ. Կայսրաւ վճիռ Կատուրի դատի ա- ռիթով էմբէրների դէմ Պրօկուրօրի առաջար-

կութեամբ, էմբէր ամուսինները արդարացըր- ված են: Դատաստանական ծախսերը զրված են Կատուրի վրա:

ԿԱՐԱԿԱՍ. Ապրտամբները, թուով 2800 մարդ, գրաւեցին մի զօրեղ զիւրք Կարակասից 20 մղոն հեռաւորութեամբ: Կառավարական զօր- քերը նոյնպէս գրաւած ունեն զօրեղ զիւրքեր: Նրանք ջարդեցին Կարակասի մօտ 1800 ապ- տամբներին, որոնք գտնվում էին Ֆէրնանդէցի հրամանատարութեան տակ:

ԲԵՐԼԻՆ. Կ. Պոլսից «Berliner Tageblatt» լրագրին հաղորդում են, որ վերջին օրերս գերմանական գեապալի յաճախակի խորհր- ղակցութիւններ ունէր մեծ վիզիրի հետ Մա- կեդօնիայի վերաբերմամբ և պաշտպանում էր այն կարծիքը, թէ Բ. Դրան համար շահաւէտ է հոգ տանել, որպէս զի ոչ միայն շուտով ըն- դունէ, այլ և արագութեամբ իրագործէ պե- տութիւնների առաջարկած թէֆորմները:

ՊԵՏԵՐԲՈՒԳ. «Правительственный Вѣст- НИКЪ» լրագրում տպված է Ֆինանսների մի- նիստրութեան կողմից. «Արտասահմանեան մա- մուրի մէջ չեն դադարում երեւալ տեղեկու- թիւններ, որ իր թէ Ռուսաստանը ընթացիկ տարում մտադրութիւն ունի արտասահմանեան շուկաներից մէկում պետական նոր փոխառու- թիւն անել: 1903 թ. պետական հուշեկնոց երեւում է, որ մի այդպիսի փոխառութեան կարիք չը կայ, որովհետեւ ընթացիկ տարվայ բոլոր պահանջները, սովորական և արտակարգ, առատութեամբ ծածկվում են ստանալիք եկա- մուտներով և պետական գանձարանի աւանդն գրաւում: Ամեն տեսակ թիւրիմացութիւնների առաջն առնելու համար ֆինանսների մինիստ- րը անհրաժեշտ է համարում յայտնել, որ ըն- թացիկ տարում առաջաց կառավարութիւնը փո- խառութիւն չէ կապելու արտասահմանեան շուկաներից ոչ մէկում:

Փետրվարի 8-ին Միխայլովսկի մանէֆում Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ Նի- կոլայեւսկի ինժեներների զարդի բաւալիսի զօրահանդէս և դրօշակի օրհնութիւնը: Եկա- դաւոր Կայսրն ասեց. «Պարտնեն, ընդհեղով ձեզ այսօր դրօշակը, եւ կաւարելապէս հաւա- ցացած եմ, որ դուք նոյնպիսի ազնուքեամբ եւ անճնուիրութեամբ կը ծառայէք ձեր Թագա- սարեղին եւ հայրենիքին, ինչպէս ծառայում էին ձեր նախնիները: Յիշելով նրանց ծառայու- թիւնները, յոյս ունեմ, որ դուք եւս նոյնպէս բարձր եւ նոյնպիսի արժանապատւութեամբ կը կրէք ուսակաւ սպայօրի փառաւոր կոչումը: Խմում եմ ձեր կենացը եւ Նիկոլայեւսկի ինժե- ների զարդի բարգաւաճում համար»:

Կ. ՊՈԼԻՍ. Բարս Կալիչ և Ջինովիեւ յանձ- նեցին մեծ վիզիրին մի յիշատակագիր, որով երկու կառավարութիւնները առաջարկում են վարչութիւնը բարեւել Մակեդօնիայի Ուսկիւ- բի, Բիտուլի և Սուլուի վիլայէտներում: ՊԵՏԵՐԲՈՒԳ. Ռուս-պիտանական բանկին թոյ- լատրված է բանալ գիտանումները Չուգու- չակում և Կուլչում և բուխարական գործակա- լութիւնը վերափոխել բաժանմունքի: Բանկը կը տարածէ իր գործունէութիւնը Վերնիի և շուտով Տալկէտի վրա: Միջին-ասիական բոլոր բաժանմունքների ղեկավարութիւնը զըր- ված կը լինի Սամարկանդի բաժանմունքի ղե- րեկտօր Բաուէրի վրա:

10 փետրվարի

ԳՐՕԴԵՆՈ. Նորին Կայսերական Մեծութեան հետադիւր. «ԱՐ տանց շնորհակալութիւն են յայտնում Գրօդոնի ազ- նուականներին ինձ արտայայտած զգացմունքներին համար և անկեղծ զգացված եմ նրանց երախտագիտու- թեամբ նրանց բարդ և վստահացած աշխատութեան և նա համար Արեւմտեան երկրի տեղական ազգաբնակչութեան կարիքները հոգալու համար: Ընկ յօ- լայն: Այդ հեռագրով բաղդաւորեցված են ազ- նականները ի պատասխան Վիլսօի գեներալ- նահանգապետի հետեւալ հեռագրի. «Նորին Կայ- սերական Մեծութեան, Գրօդոնի ազնուական- ները, հաւաքվելով մինչև հարիւր մարդ Գրօդ- նում, գիտակցելով Միացեալ վստահութիւնը, որ արտայայտվեց դէպի ազնուականները կանչե- լով մասնակցելու գիւղատնտեսական արգիւնա- քերական կարիքների համար կազմած կոմիտե- ներին, գիւղացիներ ինձ միջնորդելով արկանել առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեան հաւա- տարիմ հպատակութեան և անսահման անձ- նուիրութեան զգացմունքները:

Խորագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱՅԻ ՄԷԼԻՔ-ԱԼԱՄԱՆԵԱՆ

